«ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ԱՄԲԻՈՆԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՍՏ ԱՄԲԻՈՆԻ 2020-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Դասընթացներ

«Բնագիտական առարկաների» ամբիոնը գործում է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետների կազմում՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով:

Ամբիոնն իրականացնում է ներքոնշյալ աղյուսակում ներկայացված մասնագիտական առարկաների դասավանդումը՝

N	Առարկա	Ֆակուլտետ
1.	Կենսաքիմիա	Բուժական
2.	Կենսաքիմիա, Բ/Խ կենսաքիմիա	Ստոմատոլոգիական
3.	Կենսաօրգանական քիմիա	Բուժական Ստոմատոլոգիական
4.	Ընդհանուր քիմիա	Բուժական Ստոմատոլոգիական
5.	Բժշկական ֆիզիկա	Բուժական Ստոմատոլոգիական
6.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	Բուժական Ստոմատոլոգիական
7.	Դեղաբանություն	Բուժական Ստոմատոլոգիական
8.	Ֆարմակոգնոզիա	Բուժական Ստոմատոլոգիական
9.	Դեղաբույսերի մորֆոլոգիա	Բուժական Ստոմատոլոգիական
10.	Կլինիկական դեղաբանություն	Բուժական Ստոմատոլոգիական

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

Ամբիոնն ապահովված է համապատասխան մասնագետներով: 2020-21 ուս.տարում ունեցել է թվով 11 աշխատակից, որից՝ կենսաբանական գիտությունների թեկնածու-3, քիմիական գիտությունների թեկնածու-2, որից մեկն ունի նաև դոցենտի կոչում, ֆիզ.մաթ. գիտությունների թեկնածու-1, դասախոս-4, որից մեկն ունի ավագ դասախոսի որակավորում, ուսումնաօժանդակ –1:

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը՝ 44տարեկան:

«Կենսաքիմիա» և «Կենսաքիմիա, բ/խ կենսաքիմիա» առարկան դասավանդող դասախոս, ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Հ. Ջավրուշյանը 2021-22 ուս. տարվա մեկնարկին չի շարունակելու դասավանդել և իրականացնել ամբիոնի վարիչի վարչական պարտականությունները՝ ֆիզիկական արձակուրդի անցնելու պատճառով: Ուստի ամբիոնը կարիք ունի համապատասխան առարկան դասավանդող դասախոսի, ինչպես նաև ամբիոնի վարիչի պատասխանատվությունները և պարտականությունները իրականացնող մասնագետի, ով կփոխարինի վերոհիշյալ աշխատակցին: Ներկա դրությամբ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից ք.գ.թ., դոցենտ Վ.Հովսեփյանը կարող է հանդիսանալ ամբիոնի վարիչի ժամանկավոր պաշտոնակատար, ինչպես նաև իրականացնել «Կենսաքիմիա» և «Կենսաքիմիա, բ/խ կենսաքիմիա» առարկաների դասավանդումը:

Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները

-Ամբիոնում ներառված դասընթացները անցկացվում են ԱԲՀ գլխավոր մասնաշենքի մասնագիտացված կաբինետներում, լսարաններում և լաբորատորիաներում, որոնք համալրված ու հագեցած են արդիական սարքավորումներով, ապահովված են դասընթացը, գործնական պարապմունքները անցկացնելու համար անհրաժեշտ նյութերով և պարագաներով, որոնք պարբերաբար համալրվում և թարմացվում են ըստ պահանջի:

-Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ հաջորդ ուստարվա ընթացքում, ցանկալի է բարելավել լաբորատոր սենյակները՝համալրելով դրանք ժամանակակից սարքավորումներով, որը թույլ կտա ուսանողներին կատարել գիտահետազոտաան աշխատանքեր՝դասախոսների ղեկավարությամբ: Այդ աշխատանքների արդյունքների մշակումները հոդվածի տեսքով հնարավոր կլինի տպագրել ԱԲՀ պարբերականում:

-Բացի այդ, համակարգչային սենյակը նույնպես ցանկալի է համալրել նոր համակարգիչներով, հաշվի առնելով ուսանողների թվի աճը խմբերում:

-Ամբիոնի վարչական աշխատանքների կազմակերպման համար ավելորդ չի լինի ամբիոնում տպող և պատճենող սարքի առկայությունը:

Հետազոտությունների հիմնական ուղղությունները և ձեռքբերումները

Հոդված

1. Javrushyan H., Avtandilyan N., Trchounian A., 2021. The effects of NO on the urea cycle pathway in short-term intermittent hypobaric hypoxia in rats. *Respiratory Physiology & Neurobiology*, 285: 103598.
2. Javrushyan H.G., Avtandilyan N.V., Ginovyan M.M., Trchounian A.H. 2021. New therapeutic approaches in breast anticancer treatment using Armenian herbal extracts. *Biological Journal of Armenia*, 73(1): 32-38.
3. Mamikonyan A., Javrushyan H., Avtandilyan N., Trchounian A. 2021. Suppression of tumor progression by arginase and NO-synthase combined inhibition in 7,12- dimethylbenz(a)anthracene-induced breast cancer in rats. *FEBS Open Bio*, P-08.2-02, https://doi.org/10.1002/2211-5463.13205

4. N.K. Shaboyan[1], A.V. Moghrovyan[2], K.H. Dumanyan[2], **N.H. Ghukasyan[2]**, A.A. Altunyan[2], N.I. Arshakyan, A.M. Ghazaryan[2], G.R. Ulikhanyan[2], A.L. Ginosyan[3], A.S. Dadayan[4], N.B. Chichoyan, Phytochemical Analysis and Antioxidant Activity of Cotinus coggygria Scop. from Armenian Flora, *DOI:10.5530/pj.2021.13.120*
5. Bagdasaryan S.A., Babayan B.G., Mikaelyan G.S., 2020. Hexadecane biodegradation by different representatives of native, soil *Stenotrophomonas* and *Pseudomonas*, *Biological sciences "Eurasian Scientific Association"*, № 3(61), ISSN: 2411-1899, DOI: 10.5281/zenodo.37463326 eLIBRARY ID: 42734162, p. 97-99. https://esa-conference.ru/journal/61ya-mezhdunarodnaya-nauchnaya-konferentsiya-eno/
6. B.G. Babayan, S.A. Bagdasaryan, M.H. Kinosyan, M.A. Melkumyan, N.A. Hovhannisyan, 2020. Metabolic and Genetical Features of Biodegradation and Resistance Potential of Soil Pseudomonas sp. *From The National Culture Collection of Microorganisms, Republic of Armenia, The European Journal of Biomedical & Life Sciences*, v.1, p. 12 – 19. DOI: https://doi.org/10.29013/ELBLS-20-1-12-19 http://ppublishing.org/journals/398/issue/56423/articles/4752/
7. Babayan B.G., Mikaelyan A.R., Asatryan N.L., Bagdasaryan S.A., Melkumyan M.A., 2020. The Effect Of Tartaric Acid New Derivatives Against The Multidrug Resistant Opportunistic Pathogenic Soil Strains of *Pseudomonas fluorescens, Test Engineering & Management, March-April 2020,* v.83, ISSN: 0193-4120, p. 8516 -8521, http://www.testmagzine.biz/index.php/testmagzine/article/view/5182/4181
8. Babayan B.G., Mikaelyan A.R., Asatryan N.L., Melkumyan M.A., Bagdasaryan S.A., Grigoryan A.M., 2021. Tartaric Acid New Synthetic Derivatives Antibacterial Activity against the Phytopathogenic *Pseudomonas syringae*, Proceedings of The *2nd International Conference on Advanced Research in Science, Engineering, and Technology, Paris, France (ICARSET),* **ISBN:** 978-609-485-137-7, p. 1-7
9. Багдасарян А.Б., Бабаян Б.Г., Унанаян Л.Р., Григорян А.М., Микаелян А.Р., 2021. Сравнительный анализ оценки антибактериальной активности имидов и аминосолей винной кислоты, методом молекулярного докинга*, International Electronic Scientific and Practical Journal "WayScience"*, ISSN 2664-4819 (Online), ч.1, стр 156 – 164.
10. Mikaelyan A.R., Babayan B.G., Nersisyan G.H., Grigoryan A.M., 2021. The study of tartaric acid based new complex preparation of plant growth activation, *Bulletin of High Technology Republic of Artsakh*, (*AGRICULTURE)*, N1(15),p. 10-20.
11. Poghosyan A.R., Babayan B.G., 2021. Vivaldi's Baroque: The Lost Perfection of Performing Art And Composition Techniques, *German International Journal of Modern Science №8, 2021 // Deutsche international Zeitschrift für zeitgenössische Wissenschaft,* №8, VOL. 2, p.9-10, DOI:10.24412/2701-8369-2021-8-2-9-10
12. Poghosyan A., Babayan B., Labadze A., Avetisyan D., 2021. Music Listening Target Influence On Human, *Journal of science. Lyon*, №19, VOL.1, ISSN 3475-3281, p. 3-6

Համալսարանի դասախոսների մասնագիտական վերապատրաստումները, մասնակցությունները գիտական միջոցառումներին (առանց ելույթի) և դրամաշնորհներին, ստացած արտոնագրերը, անդամակցությունը գիտական կազմակերպություններին և այլ գիտական ու գիտաուսումնական ձեռքբերումներ 2020-2021 ուս. տարվա ընթացքում:

1. Լիա Մարտիրոսյան - Data-driven Decision Making, PwC առցանց դասընթաց, https://coursera.org/share/a4007ef62aa774a02cf1b80704da1803
2. Լիա Մարտիրոսյան - Problem Solving with Excel, PwC, https://coursera.org/share/a4007ef62aa774a02cf1b80704da1803
3. Լիա Մարտիրոսյան - Problem Solving with Excel, Pw, https://coursera.org/share/2ba61930a52e5379c26dabf76525ee1
4. Լիա Մարտիրոսյան - Excel Skills for Business: Essentials, Macquarie University, Sydney, Australia, https://coursera.org/share/bd1452517f15595669f77be897b33396
5. Լիա Մարտիրոսյան - Excel Skills for Business: Intermediate I, Macquarie University, Sydney, Australia, https://coursera.org/share/808dc4544c2ee1451c445160409e2fb1

6. Հայարփի Ջավրուշյան - «Conference skills for researchers» April, 2021, Researcher Academy.
7. Հայարփի Ջավրուշյան - «Effective search in Scopus and ScienceDirect: basic principles and new opportunities» April, 2021, Researcher Academy
8. Հայարփի Ջավրուշյան - «General guidelines of using journal metrics and matching sources to a manuscript» at Elsevier Russia online training session, on March, 2021 Presented by Andrey Mikhailov Elsevier Research Solutions
9. Հայարփի Ջավրուշյան - «Organizing a research paper for international journals» at Elsevier Russia online training session, on April, 2021 Presented by Andrey Mikhailov Elsevier Research Solutions.
10. Հայարփի Ջավրուշյան - «How to prepare your manuscript» Researcher Academy, training session June, 2021, presented by Anthony Newman
11. Հայարփի Ջավրուշյան - «How to design effective figures for review articles» Researcher Academy, training session, July, 2021, Presented by Tom Dursch, Matt Pavlovich, Stacey Chin
12. Babayan B., Mikaelyan A., Asatryan N., Melkumyan M., Bagdasaryan S., Grigoryan A. 2021. Tartaric Acid New Synthetic Derivatives Antibacterial Activity against the Phytopathogenic Pseudomonas syringae, *2nd International Conference on Advanced Research in Science, Engineering, and Technology (ICARSET), Mar 26-28, 2021, Paris, France*, ISBN: 978-609-485-137-7, p. 1-7. https://www.dpublication.com/proceeding/2nd-icarset/#Table-of-Contents

Անդամակցություն գիտական կազմակերպություններին

- Հայարփի Ջավրուշյան - Armenian Association of Biochemists (Federation of European Biochemical Societies (FEBS)) NGO, since 2012.
- Հայարփի Ջավրուշյան - Young Biologists Association NGO, since 2009,

Մասնակցություն դրամաշնորհներին

- Հայարփի Ջավրուշյան – *Anticancer and immunomodulatory potential of Armenian herbal extracts and elucidation of synergy with chemotherapeutic agents against 7,12-dmba-induced mammary carcinogenesis in rats*. The Armenian National Science & Education Fund (ANSEF), Armenia, 2020.

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 1.1 Միջոցներ ձեռնարկել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ուղղությամբ

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսական կազմը մասնակցել է համալսարանի կողմից կազմակերպված «Բարձրագույն կրթության ժամանակակից հիմնախնդիրներ և որակի ապահովման համատեքստը» և «Հոգեբանամանկավարժական տեխնոլոգիաներ» խորագրով վերապատրաստումներին: (**Հիմք՝** ամբիոնի աշխատակիցներ- Հ.Ջավրուշյանին, Ն.Սարիբեկյանին, Լ. Մարտիրոսյանին, Ա.Գրիգորյանին, Ռ.Հովսեփյանին, Ն.Ղուկասյանին, Բ.Բաբայանին, Վ.Հովսեփյանին, Ար.Գրիգորյանին մասնակցության ավարտին տրվել են դասընթացի մասնակցության հավաստագրեր):

Գործողություն 1.2. Ամբիոնի առարկայական դասընթացների թվայնացում

2020-2021 ուս. տարվա ընթացքում վերանայվել են առարկայական ծրագրերը և նկարագրերը, ինչպես նաև թվայնացվել են վերոնշյալ դասընթացների նյութերը՝ դասագրքեր, դասախոսություններ, տեսաներկայացումներ: (**Հիմք՝** առարկայական ծրագրերն և նկարագրերը էլեկտրոնային տարբերակով առկա են ամբիոնի համակարգչում, իսկ տպված տարբերակով պահվում են ամբիոնում: Ամբիոնում դասավանդվող առարկաների վերաբերյալ գրականությունը էլեկտրոնային տարբերակով պահվում է ԱԲՀ գրադարանում: Տեսանյութերի բազան յուրաքանչյուր առարկայից, յուրաքանչյուր կիսամյակի համար պահվում է Ուսումնական բաժնի համակարգչում):

Գործողություն 1.3. Առարկայական դասընթացների վերաբերյալ տեսանյութերի բազայի ստեղծում

Տե՛ս 1.2 կետը:

Բացի դա իրականացվել է տեսանյութերի բազայի ստեղծում: Յուրաքանչյուր առարկայի յուրաքանչյուր կիսամյակի համար ամբիոնում պահպանվում են տեսնյութեր յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ:

Գործողություն 1.4. Դասալսումների և դրանց քննարկումների բարելավում

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են դասալսումներ ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացներից և բոլոր դասախոսների մոտ: Դասալսումների մի մասը իրականացվել է դասախոսի անմիջական մասնակցությամբ հեռավար դասընթացին, իսկ մի մասը՝ դասաժամի ձայնագրության հիման վրա: Կիսամյակային դասալսումներից հետո իրականացվել են քննարկումներ, որի ընթացքում պրոֆեսորադասախոսական անձնակազմին առաջարկվել է վերանայել դասավանդման մեթոդները կամ վերացնել այն թերությունները, որոնք եղել են դասալսման արձանագրման ընթացքում: (**Հիմք՝** ամբիոնում կատարվել է թվով տասնյութ փոխադարձ դասալսում: Դրանք քննարկվել են 5, 6, 8, 9 և 10-րդ ամբիոնական հերթական նիստերում: Համապատասխան արձանագրությունները էլեկտրոնային և թղթային տարբերակով պահվում են ամբիոնում: Արձանագրված հիմնական թերություններն են հանդիսացել կապի խափանման հետ կապված կամ տեխնիկական այլ խնդիրներ, որի հետևանքով դասախոսը ստիպված է եղել նյութը նորից կրկնել: Մեկ այլ հաճախակի հանդիպող թերություն է հանդիսացել ծավալուն թեմայի մատուցումը կարճ ժամանակահատվածում ներկայացնելը: Գարնանային կիսամյակի դասալսումների արձանագրումը կատարվել է նոր ձևանմուշի համաձայն):

Գործողություն 1.5. Ամբիոնի կադրային ներուժի բարելավում

Սույն գործողության վերաբերյալ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը անընդհատ իրականացվող վերապատրաստումների արդյունքում բարելավում է ինչպես մասնագիտական, այնպես էլ մանկավարժական գիտելիքները: Վերապատրաստումներն անցկացվում են ինչպես հանրապետական այնպես էլ միջազգային հարթակներում: (**Հիմք՝** ամբիոնի դասախոսական անձնակազմից վեց դասախոս մասնակցել է միջազգային և հանրապետական գիտաժողովներին, տպագրել հոդվածներ տարբեր ամսագրերում, դարձել դրամաշնորհների շահառուներ և ծավալել այլ գիտական գործունեություն: Վերջինիս

վերաբերյալ բոլոր հավաստող փաստաթղթերը և վկայականները առկա են ՄՌԿ բաժնում, իսկ հղումները ուղարկվել են գիտական բաժին)։

Գործողություն 1.7. Ամբիոնային աշխատանքների պլանավորում և համակարգում

Ամբիոնային աշխատանքների պլանավորումը և համակարգումն իրականացվել է հաշվետու ժամանակահատվածի ընթացքում անընդհատ՝ ներառելով կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումները։ Իրականացվել է հերթապահությունների, ընթացիկ հարցումների, կիսամյակային միջանկյալ և ամփոփիչ քննությունների, և այլ հարցերի պլանավորում և իրականացում։ (**Հիմք**՝ միջանկյալ, ամփոփիչ և ընթացիկ քննությունները, լուծարքները, դասալսումները, հերթապահությունները կազմակերպվել են համաձայն նախապես հաստատված ժամանակացույցերի, որոնք քննարկվել են և հաստատվել 3-րդ հերթական ամբիոնական նիստից սկսած։ Ամբիոնի նիստերի արձանագրությունները պահվում են ամբիոնում էլեկտրոնային և թղթային տարբերակով, որոնց կցված են վերոնշյալ ժամանակացույցերը)։

Գործողություն 1.9. Մասնակցություն ԱԲՀ-ի գիտական խորհրդի նիստերին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը մասնակցել է գիտական խորհրդի նիստերին, որոնց քննարկումներին ամբիոնը ցուցաբերել է ակտիվ մասնակցություն օրակարգերում քննարկվող տարբեր հարցերի վերաբերյալ։ Սույն թվականի հունիսին կայացած գիտական խորհրդին ամբիոնը ներկայացրել է Հ.Գ. Ջավրուշյանի կողմից հեղինակած Կենսաքիմիայի լաբորատոր ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը։ Ձեռնարկը գրվել է հատուկ ԱԲՀ օտարալեզու ուսանողների համար, անգլերեն լեզվով, լաբորատոր և գործնական պարապմունքներն անցկացնելու նպատակով։ (**Հիմք**՝ գիտ.խորհրդի որոշման համաձայն, հիմք ընդունելով տարբեր գիտական հաստատություններից չորս աշխատակիցների կողմից գրքի վերաբերյալ ներկայացված դրական կարծիքները, Հ.Գ. Ջավրուշյանի հեղինակած Կենսաքիմիայի լաբորատոր ձեռնարկը երաշխավորել է տպագրության)։

Գործողություն 1.10. Փոխադարձ դասալսումների պլանավորում և անցկացում

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են պլանավորված թվով 17 փոխադարձ դասալսումներ՝ համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի։ Դասալսումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և իրականացվել գնահատում։ Թերությունների և դիտողությունների առկայության դեպքում իրականացվել է տվյալ մասնագետների հետ քննարկումներ և պարզաբանումներ, ինչպես նաև դրանք շտկելու ուղիներ առաջարկվել։ (**Հիմք**՝ սույն ուսումնական տարվա ընթացքում պլանավորվել է անցկացնել տասնյոթ դասալսում համաձայն դասալսումների ժամանաացույցի։ Կատարվել է տասնյոթ փոխադարձ դասալսում։ Դրանք քննարկվել են 5, 6, 8, 9, 10-րդ ամբիոնական նիստերում։ Նիստերի և դասալսումների արձանագրությունները, ինչպես նաև դասալսումների ժամանակացույցերը թղթային և էլեկտրոնային տարբերակներով պահվում են ամբիոնում)։

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 2.2. Իրականացնել միջոցառումներ ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով:

2020-2021 ուս. տարին իրականացվել է ամբողջությամբ հեռավար տարբերակով, ուստի այս գործողությունը ոչ բավարար չափով է իրականացվել՝ համեմատելով նախորդ տարիներին կատարված աշխատանքը: Իհարկե տարվել են որոշակի աշխատանքներ ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու համար, այնուամենայնիվ ամբիոնը բաց թողնված միջոցառումները կլրացնի 2021-2022 ուս. տարվա ընթացքում առկա ուսուցմանն անցնելու դեպքում: Այնուամենայնիվ ստորև ներկայացված աղյուսակից երևում է, որ ուսանողների որակական և ընդհանուր առաջադիմությունը չի տուժել անկախ դասերի առցանց ձևաչափով անցկացնելուն: **Հիմք՝**

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

N	Ֆակուլտետ	Աշնանային կիսամյակ		Գարնանային կիսամյակ		Տարեկան առաջ.	
		Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.
1	Բուժական գործ	**70.1**	**35.3**	**87**	**52.7**	**78.6**	**44**
2	Ստոմատոլոգիա	**80.95**	**49.1**	**84.3**	**69.1**	**82.6**	**59.1**
Ընդամենը		**75.5**	**42.2**	**85.7**	**60.9**	**80.6**	**51.6**

Գործողություն 2.3. Խորհրդատվությունների տրամադրման աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել և հաստատվել են ամբիոնի հերթապահության գրաֆիկներ աշնանային և գարնանային կիսամյակների համար: Խորհրդատվությունը ուսանողներին տրամադրվել է հեռավար տարբերակով՝ զում կամ այլ տեղեկատվական հարթակում: Յուրաքանչյուր դասախոս հերթապահության ժամանակացույցի սահմանված օրը և ժամին միացել է համապատասխան առցանց հարթակին և անհրաժեշտության դեպքում տրամադրել է խորհրդատվություն: Բացի սահմանված գրաֆիկից խորհրդատվություններ տրամադրվել են նաև ըստ պահանջի՝ ելնելով իրավիճակից: (**Հիմք՝** խորհրդատվությունները ամբիոնում կատարվել են ըստ պահանջի, խմբում կամ անհատական: Դասախոսների կողմից մատյաններում լրացված են խորհրդատվությունների անցկացման օրերը, քննարկված թեմաները: Խորհրդատվություններն անցկացվել են zoom, googlemeet, messenger, whats app, facebook, e-mail և այլ հարթակներում):

3. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 3.4. Ընդլայնել ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվող գիտական հոդվածների քանակը:

Սույն ուսումնական տարվա ընթացքում «Բնագիտական» առարկաների ամբիոնի դասախոսները մասնակցել են հանրապետական և միջազգային կոնֆերանսներին, անցել են վերապատրաստումներ արտերկրում և հանրապետությունում, տպագրել են գիտական հոդվածներ տարբեր ամսագրերում: Սակայն այդ աշխատանքների քանակը զգալիորեն զիջում է նախորդ տարիներին իրենց թվով, որի պատճառը ՀՀ-ում և աշխարհում տիրող համավարակի պատճառով հայտարարված արտակարգ իրավիճակը և դրա հետևանքներն են: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ մեր դասախոսական անձնակազմը փորձել է այդ խնդրից օգուտ քաղել՝ յուրացնելով նոր ժամանակակից ծրագրեր ուսումնական գործընթացի հեռավար կազմակերպման համար, որը կարելի է հետո նույնպես հաջողությամբ կիրառել ուսումնական գործընթացում: Բացի այդ նախորդ տարվա համեմատ գրանցվել է նաև աճ գիտական կոնֆերանսների մասնակցության և տպագրված աշխատանքների քանակի վերաբերյալ: Սա վկայում է, ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի նոր իրավիճակին արագ հարմարվելու և կողմնորոշվելու պատրաստակամության դրսևորման մասին: **Հիմք՝** ամբիոնի դասախոսական անձնակազմից վեց դասախոս մասնակցել է միջազգային և հանրապետական գիտաժողովներին, տպագրել հոդվածներ տարբեր ամսագրերում, դարձել դրամաշնորհների շահառուներ և ծավալել այլ գիտական գործունեություն: Վերջինիս վերաբերյալ բոլոր հավաստող փաստաթղթերը և վկայականները առկա են ՄՌԿ բաժնում, իսկ հղումները ուղարկվել են գիտական բաժին /1 դրամաշնորհ, 12 հոդված, 12 վերապատրաստում/:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 4.1. Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման բարելավում

Հաշվի առնելով ամբիոնի ուսանողակենտրոն քաղաքականությունը, ամբիոնի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը պարբերաբար ուսանողների հետ քննարկումներ են իրականացրել ամբիոնում դասավանդվող առարկաների վերաբերյալ, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնի վարիչի և կուրսղեկների հետ միասին: Թերությունների կամ վիճելի հարցերի առկայության դեպքում արագ առաջարկվել են օպտիմալ լուծումներ և անմիջապես շտկվել: **Հիմք՝** առցանց հարթակներում պահպանված քննարկումներ, ինչպես նաև էկրանապատկերումներ կամ տեսաձայնագրություններ հանդիպումներից:

Գործողություն 4.2. Մասնակցություն ներհամալսարանական ՈԱ միջոցառումներին:

Ամբիոնը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է Համալսարանի ՈԱ միջոցառումներին և հատկապես բոլոր վերապատրաստումներին, որոնք իրականացվել են բաժնի կողմից՝ «Բարձրագույն կրթության ժամանակակից հիմնախնդիրներ և որակի ապահովման համատեքստը», «Հոգեբանություն և մանկավարժական տեխնոլոգիաներ» թեմաներով:

«ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ կ.գ.թ. Հ.Գ. ՋԱՎՐՈՒՇՅԱՆ

Պաշտոնական փաստաթուղթը գտնվում է համալսարանում